

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ՀԱՅԱԳԻՏԱԱԿՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

ԹԻԻ 4—6

ԱՊՐԻԼ—ՅՈՒՆԻՍ

ԿԴ. ՏԱՐԻ 1950

ԳԷՈՐԳ Վ. ՄԵՂՐԻԿ ԵՒ ԻՐ ԳՐՈՒԹԻՐԻՆՆԵՐԸ (1044—1115)

Գէորգ վարդապետ մեծ հռչակ վայելած է իր դարուն իբրև ճգնագրեաց, սրբակրօն, քաղցրարարոյ, մեղրախօս եւ քաղցրուսոյց վանական, իսկ յաջորդ դարերը յարգանքով յիշած են անոր հեղինակաւոր անունը, յաճախ պարզապէս Մեղր կամ Մեղրիկ վարդապետ յորջորջանքով:

Իր մասին խօսած են Հ. Մ. Չամչեան, Պատմութիւն Հայոց, Գ., էջ 16 եւ 34. Գերապ. Սուքիաս Սոմալեան, Quadro della storia letteraria di Armenia, Վենետիկ 1829, էջ 77 եւ Հ. Գ. Չարբանալեան, Հայկական հին դպրութեան պատմութիւն, Վենետիկ 1897, էջ 604. Երեքն ալ կը լռեն անոր գրական գործերու մասին, Սոմալեան նոյն իսկ կը գրէ թէ իրմէ non esiste più alcuna opera, իսկ Չարբանալեան յիշած է մէկ քանի Աղօթքներ Ներածական Բաժնին մէջ (էջ 106) միայն:

Մեր նպատակն է այստեղ ծանօթացնել անոր անձը, թուել անոր գրութիւններն եւ հրատարակել անոնցմէ մին:

ԿՆԱՆՐԸ

Գէորգ վախճանած է 70ամեայ հասակին 1114/5 տարւոյն. ուստի ծնած է 1044/5ին: Ծննդավայրն է Վասպուրականի Անալիւր գիւղը. վայր մը, որ անձանօթ է այլուստ: 20ամեայ հասակին մտած է Սեւանի վանքը (1064) հետեւելու ճգնաւորական կեանքի, այս պատճառով ալ կոչուած է Սեւանեցի: Ժամանակակիցները յորջորջած են զինքը փաղաքական անուամբ Գ. Մեղր, որ ապա վերածուած է Մեղրիկի: Յետ ժամանակի, հաւանօրէն Գրիգոր վկայասէր կաթողիկոսի Անի այցելելէն ետքը, անցած է Սեաւ լեռը. գտնուած է Պառլահու եւ Կարմիր վանքերը: Այս տեղ ապրած է կաթողիկոսին հովանաւորութեան տակ, իբրև ընկերակից Կիրա-

կոս վարդապետին եւ թարգմանչին: Կիրա-կոս կ'անուանէ զանիկա «գերէց աւուրբք եւ խոհականութեամբ, գեղբայրն մեր եւ զանգրանիկ մերոյն կըթաւարժ եւ հրահանգայեղջ աշակերտութեան՝ զխաչակիրն (եւ զքրիստոսազգեացն) Գէորգ մականունն Մեղր կոչեցեալ»: Իսկ Յովհաննէս գրիչ 1098ին ի Պառլահու վանս խօսելով Գրիգոր վկայասէրի մասին, կը գրէ, թէ «էին սորա սուսնակից(ք) եւ վարժակիցք վարդապետք սուրբք եւ առաքինազարգք՝ Գէորգ Մեղրն կոչեցեալ եւ Կիրակոս, արք վարժք յաստուածայինսն ուշ ունելով մարգարէական երանութեանցն՝ յորէնս Տեառն խորհելովն ի տուէ եւ ի գիշերի, փոյթք յառնել եւ յուսուցանել եւ ճշմարտագէտ դեղովք ապաշխարութեան գրազուծա արժանացուցին շնորհին: Ի սոցա վարժարանէ էր այր ոմն հեզամիտ եւ բարեշնորհ, ներհուն եղեալ մակացութեան արհեստի, Գրիգոր անուն», որուն խնդրանքով օրինակած է Յովհաննէս գրիչ Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի Թ. 131 Կանոնագիրքը, զոր սկսած էր Պառլահու վանքին մէջ եւ աւարտած Արմէնի լեւրան Յովհանայ անապատին մէջ¹:

Կ'երեւայ թէ Գէորգ ապա, կաթողիկոսի մահէն ետքը, փոխադրուեցաւ Կիլիկիա, ուր կ'իշխէր Մեծն Թորոս (1100—1129), ուր կազմակերպեց խորին անապատն եւ Դրազարկի վանքը: Վախճանեցաւ Հայոց ՇԿԳ (1114 փետր. 21—1115 փետր. 20) թուականին, հաւանօրէն հրատից ամսոյն 24ին (9 փետր. 1115) եւ թաղուեցաւ նոյն վանքին մէջ:

Գէորգ Մեղրիկ եղած էր քարոզիչ ապաշխարութեան:

ԱՂՐԻՐՆԵՐ ԻՐ ԿՆՍԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

1. Մատթէոս Ուրհայեցի (Ժամանակագրութիւն, էջ 418) կը գրէ յամն ՇԿԳ.

¹ Յիշատակարանիս ամբողջական բնագիրը տես Ալիեան, Թուղթ Մակարայ, էջ 97—98:

«Յայսմ ամի մեռաւ սուրբ վարդապետան Հայոց Գէորգ, որ անուանեալ կոչեցաւ Մեղրիկ, որ էր այր սքանչելի եւ հրաշալի ճշնաւոր, եւ զառաջին (այլ՛ գամենայն) ժամանակս կենաց իւրոց անցուցեալ էր միայնակեցութեան կարգօք զամս յիսուն. եւ վախճանեցաւ ամաց եօթնասնից ամենայն ժուժկալ եւ ճգնաւորական հանդիսիք. եւ չորսնասնակ գոլով յամենայն կեանս իւրում՝ հաւասարեալ էր ամենայն կարգօք եւ կրօնիւք առաջին սրբոցն: Եւ զամենայն ժամանակս կենաց իւրոց զկիրակէքն յոտանաւոր տքնութեան (տպ. արթնութեամբ) անցուցանէր:

Եւ էր ինքն ի Հայոց աշխարհէն, ի Վասպուրական գաւառէ, ի գեղջէն որ Անալիւր կոչի գեղն եւ է մեծ: Սա ի տղայութեան կրօնաւորեալ լինէր ամենայն հռչակաւոր անուամբ եւ վարս սքանչելի ստացեալ եւ օրինակ բազմաց եղեալ. եւ Հայր խոստովանութեան լինէր ամենայն Հայաստանեայցս, եւ դարձուցանէր զամենեսեան ի ճանապարհս լուսոյ եւ ի ձեռն ապաշխարութեան յորդեգրութիւն Հօրն երկնաւորի ընծայեցուցանէր զամենեսեան: Սա մեռանէր բարի խոստովանութեամբ ի Քրիստոս. եւ թաղեցաւ ի գաւառ(ի)ն Անաւարզայ, ի մեծ անապատն որ Դրազարկ կոչի, զոր նորոգեաց մեծ իշխանն Հայոց Թորոս» (էջ 334): Եւ յամս ԾՀԶ (1127/8). «Մեռանէր սուրբ վարդապետն Հայոց որ ասի Կիւրոս (իմացիր՝ Կիրակոս) . . . ընկերակից Գէորգայ վարդապետին, որ ասի Մեղրիկ: Սա մեռաւ եւ թաղեցաւ ի վանքն որ կոչի Դրազարկ, եւ կոչեցաւ վանքն այն Գերեզմանատունք սուրբ վարդապետացն, վասն զի անդ թաղեցաւ սուրբ վարդապետն Հայոց որ ասի Մեղրիկ, որ ժողովեաց անդ զամենայն զասս ճգնաւորացն Քրիստոսի եւ հաստատեաց անդ կարգ եւ կրօնք զառաջին սրբոց հարցն» (Վաղարշապատ 1898, էջ 366):

2. Այս Կիրակոս վարդապետը օգնականն եղած է Գրիգոր վկայասէրի. սա թարգմանած է 1116ին Ոսկերեբանի Մեկնութիւնն Գործք Առաքելոցի, որուն յիշատակարանին մէջ կը խնդրէ յիշել, ինչպէս տեսանք վերը, գեղբայրն մեր . . . զխաչակիրն Գէորգ մահանուն Մեղր կոչեցեալն, վասն զի յորդորիչ եղեւ մեզ ի սկզբանն եւ թելազիր կատարմանս սորա» (էջմ. Թ. 1315, թղ. 452բ. հմմտ. Ակինեան, Թուղթ Մակարայ, էջ 97, ծ. 23): Իսկ Ոսկերեբանի Յովհաննու Մեկ-

նութեան Յիշատակարանին մէջ կ'արձանագրէ 1121ին Կիրակոս վարդապետ նոյն տողերը այսպիսի վերջաւորութեամբ՝ «զքրիստոսազդեացն զԳէորգ մահանուն Մեղր կոչեցեալ յիշեալիք ի Քրիստոս» (Հայագատում, էջ 354):

3. Սարգիս Շնորհալոյ Կաթողիկեայց Մեկնութեան նախադրութեան մէջ Կարապետ կը պատմէ թէ Քենոյ Կարմիր վանքի մէջ էրը հռչակ կը հանէ «մանուկն» Ստեփանոս, եւ նախանձողները կը չարախօսեն անոր մասին Բարսեղ կաթողիկոսի քով, «կաթողիկոսն առնու ընդ իւր վարդապետս եւ եպիսկոպոսունս եւ այլ եւս յընտիր իշխանացն . . . եւ զայ յողջոյն իշխանաց իշխանին (Գող) Վասլին (տեսուն Գեանոյ) . եւ զգլխաւոր վարդապետն զՄեղրիկ Սեւանցին, որ զԴրազարկին սահմանն է կարգաւորեալ, եւ զԿիրակոս, եւ զայ եւս նքօք ի մեծ ուխտն սուրբ ի Կարմիր վանքն, եւ ընակիչք ընկալան զնոսա բազում պատուով» (հրատարակ. Յուլիան, Յուլիան Միսիթ. Մատենադարանի, էջ 751, ըստ Թ. 315 ձեռագրին): Բարսեղ կաթողիկոս վախճանեցաւ 1113ին, ուստի այս պատահած ըլլալու է ընդ մէջ 1106—1112 տարիներուն:

4. Գրիգոր Տուտէորդի, Թուղթ առ Գրիգոր Տղայ կաթողիկոս. «Ո՛չ զիր վկայութեան զմեծի եւ զաստուածարանական սրբարանի յօրինելոյն (տպ.—ոցն)՝ երկուց լուսաւորչացն (տպ.—աւն) Մեղրկայ եւ Կիրակոսի՝ Դրազարկ կոչեցելոյ, եւ ոչ ներկեալ արեամբ Որդւոյն Աստուծոյ՝ որ Կարմիրն կոչի վանս, ոչ ի Շափիրայ եղ եւ ոչ յԱրեգակնէզ (Արեգնի⁶) կամ ի Պիոյէ⁷ եւ յայլ առանձնացեալ միանձանց . . .» (Արարատ 1893, էջ 333):

5. Միսիթար Այրիվանցի էր ժամանակագրութեան մէջ կ'արձանագրէ ընդ մէջ 1111—1120 տարիներու. «Գէորգ վարդապետն Մեղրիկ, որ գԴրազարկին կարգն սահմանեաց» (էջ 61). (Թուի § 3ի ազդեցութեան տակ):

6. Սամուէլ Անեցի. «Ի ՇԿԲ. յորում վախճանեցաւ Բասիլիոս կաթողիկոսն, փոխի մահուամբ առ Տէր եւ Գէորգ վարդապետն երանելի, անուանեալն Մեղրիկ» (էջ 123):

7. Վարդան Պատմիչ. «Ի նմին (ՇԾԳ. կարգա՛ ՇԿԳ) ամի մեռաւ Գէորգ վարդա-

պետն, մահանուն Մեղրիկ կոչեցեալ սակաքաղցրուսոյց վարդապետութեանն, նորոգող սուրբ ուխտին Դրազարկուն. որ էր ի Վասպուրական գաւառէն ի յԱնալիւր կոչեցեալ գեղջէ, սուրբ եւ սքանչելի եւ մեծ ճգնաւոր» (էջ 117):

8. Կիրակոս Գանձակեցի. «Ի ՇԿԲ թուականիս, յորում վախճանեցաւ Բարսեղ (կաթողիկոսն), փոխեցաւ առ Քրիստոս եւ հռչակաւոր վարդապետն Գէորգ, որ ըստ քաղցրութեան բարուցն իսկ Մեղրիկ կոչէին: Սա կարգաւորէ զհռչակաւոր ուխտն որ կոչի Դրազարկ. անդանդար լինէր ի պաշտօնն զցայդ եւ զցերեկ. եւ հանապազ պահօք կատարել. եւ առանձին ումեք ոչինչ լինել բայց ի հասարակաց տանէն» (էջ 62—63):

9. Ժամանակագիրն Կիլիկիոյ կը յիշէ՝ զՄեղրիկն Գէորգ. «Ի սուրբ ճգնաւորանոցն եւ ի Որին անապատն յաշխարհիս Կիլիկիոց ի Սիս, զոր նորոգեաց Թորոս իշխանն որդին Կոստանդեայ» (Սիսուան 534):

10. Գրիգոր Ծերենց Ուրթեցոյ Յայսմաւուրքի մէջ Հրոտից ԻԳ. Յուլիս 30 կ'ըսուի. «Յայսմ աւուր փոխեցաւ ի Քրիստոս սուրբ վարդապետն Գէորգ Մեղրիկն Սեւանցին, այր սուրբ եւ առաքինի, կացեալ մեծաւ առաքինութեամբ ամս. Ծ. որ զամենայն վիշերսն Կիրակէից յոտնկաց տքնութեամբ անցուցանէր. եւ զնոյն կարգ հաստատեաց ի Թրազարկն եւ ի Որին անապատն Սոյ, ի սուրբ ճգնաւորանոցն» (Վիեննա, Միսիթ. Թ. 10, թղ. 531ա. Յուլիս, էջ 92բ): Տարբեր է Փէշտիմալձեանի հրատարակած Յայսմաւուրքին մէջ, Բ. էջ 49. «. . . Մեղրիկ կոչեցեալ: Էր սա ծննդեամբ ի Վասպուրական աշխարհէ յԱնալիւր գեղջէ. այր բարերարոյ քաղցրարան եւ իմաստուն. այլ կրօնաւորեալ Սեւան կղզի զամս յիսուն (!) Սեւանցի կոչեցաւ . . .» հմմտ. Patrologia orientalis, 21, էջ 800): Գ. Ծերենց, բայց յատկապէս Գ. Փէշտիմալձեան զտնուած են Մ. Ուրհայեցոյ ազդեցութեան տակ:

Գէորգ Մեղրիկի մահուան տարին է Հայոց ՇԿԳ, որ կը սկսի 21 փետրուար 1114 եւ կ'աւարտի 20 փետր. 1115: Մ. Ուրհայեցի ամիսն եւ օրը չի յիշեր: Բայց Ուրթեցոյ Յայսմաւուրքին մէջ Գ. Մեղրիկի յիշատակը նշանակուած է հրոտից ԻԳ. եւ յուլիս 30: Այս գուգակչութիւնը Սարկաւազ վարդապետի անշարժ տօմարի համաձայն է: Թէ ի՞նչ չի-

մամբ այդ յիշատակը հրոտից 24ին գրուած է, չգիտեմ. կարելի է սակայն ենթադրել, թէ Գրիգոր Ծերենց հոս աւանդութեան մը հետեւած ըլլայ: Մաղաքիա արքեպ. Օրմանեան այս «հրոտից ԻԳ» կը համարի շարժական տօմարով աւանդուած, որով կը ստանայ ամիսն եւ օրը ըստ յուլեան տօմարի 9 փետրուար 1115 (Ազգապատում, Ա. էջ 1348): Զոր կը գտնեմ ուղիղ:

ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Երգ օրինութեանց ոգուց արթնոց եւ մաղթանք մաքուր մաաց առ Աստուած. ասացեալ սուրբ վարդապետին Գէորգայ Մեղրիկ կոչեցելոյ: Օրհնեալ է ամենասուրբ Երրորդութիւնն յամենայն երկնաւորաց եւ յերկրաւորաց . . . : Միւնիսէն, 3, 53ա—66ա (1283. անանուն²): Բրիտանական Թանգարան, 99, 231ա—35 (ԺԴ.³): Թաւրիզ, 2. 12, 14բ—21ա (1669⁴): Էջմիածին, 44, 95ա—98բ (ԺԸ): Լազարեան ձեռարան, 149, 80բ (այժմ 2 տող միայն պահուած):
2. Աղօթք Մեղրիկ վարդապետի ասացեալ ի Հայր երկնաւոր: Հայր երկնաւոր Աստուած ճշմարիտ . . . Երեւան, 985, էջ 179—87 (1371): Էջմ. 42, 21բ (1677):
3. Յաղագս աղօթից եւ զղջման մեղաց Մեղրիկ վարդապետին ասացեալ: Տէր, Տէր, պարգեւող ողորմութեան, սուր ինձ զղջումն ջերմեռանդ արտասուաց . . . : Լազար. ձեմ. 149, 78ա (1645): Թաւրիզ, 2. 12, 9ա—14բ (1669⁴):
4. Խոստովանութիւնն հաւատացելոց ուղղափառաց, գոր ասացեալ է Մեղրկայ վարդապետի (ոմանք կը խորագրեն. Բաճի խոստովանութեան յսնցանաց . . .): Քրիստոս, Որդի Աստուծոյ, արարել է ատէր, դատաւոր կենդանեաց եւ մեռելոց . . . : Միւնիսէն, 3, 83բ—104բ (1283. անանուն²): Էջմիածին, 640, 71բ—73բ (1297): 2607, 396ա (1300): Լազար. ձեմ. 149, 18բ—

² Հ. Գ. Գալէմբերեան, Յուլիս հայ. ձեռագրաց արձանի Մատենադարանին ի Միւնիսէն, Վիեննա 1892, էջ 10:
³ F. C. Conybeare, A Catalogue of the Armenian Manuscripts in the British Museum, London 1913, p. 244.
⁴ Հ. Աճառեան, Յուլիս հայ. ձեռագրաց Թաւրիզի, Վիեննա 1910, էջ 85:



1587-63

21ա (1645) : Վիեննա, 144, 201ա—204ա (ԺԵ 4) : 324, 158բ—59 (1305, Յուլյ. 770) : Թաւրիզ, 2. 12, 119ա—29ա (1669 4) : Չմամո, Անտոնեանց, 78, 280ա—285ա (1339) :

5. Աղօթք և նորին :

Դու Տէր սրտագէտ, որ քննես զերկամունս... :

Էջմիածին, 640, 73բ—77ա (1297) : Վիեննա, 324, 159ա (անխորագիր կից նախորդին «Դ» կարմրագրով) :

6. Մատնան պաղատանց սուրբ վարդապետին Մեղրկայ գկնի Ելից իւրոց յաշխարհէ :

Կամօք եւ ողորմութեամբ... : Այս իմ գիր ողջունի եւ պաղատանաց է... :

Կիպրոս, Նիկոսիա, 40, 175ա—181ա (ԺԴ), բնագիրը տես վարը :

7. Համառօտ պատմութիւնն նշխարաց սուրբ առաքելոյն Պետրոսի. սակաւ հանեալ ի բազմաց Մեղր վարդապետի, գոր արարեալ էր Պանդալէոն Երիցու :

Քահանայ ոմն արժանաւոր եւ զարգարեալ ամենայն առաքելութեամբ յԱպոստոնեաց գաւառէն, որ կոչի Կողովիտ, ի գեղն որ Բծրայրի գոմն անուանի : Էր ի նմա բնակեալ այր մի պատուական ի տանուտրական տանէ... :

Վ. «որ ոչ սակաւ բժշկութիւնք լինէր նոյաւ ի Հայաստան աշխարհին» (Թղ. 134բ—137ա) :

Գրուածքս կը շարունակուի պատմական բաժինով մը, Թղ. 137ա²—138բ. «Եւ ընդ նուազել թագաւորութեանն յազգէ Բազրատունեաց եւ ցան եւ ցիր լինելոյ ազգին մերոյ ընդ ստրկութեամբ ծառայութեան այլասեռ ազգաց...», ուր կը պատմուի թէ ինչպէս անցաւ Լամբրոն բերդն Օշինեանց եւ ինչպէս Տարսնի տէրն Ապրիլարի պետեղեց Պետրոս առաքելոյն նշխարքը Լամբրոնի մէջ. սակաւ Օշին Լամբրոնի սրբատեղին կը յանձնէ իր որդւոյն Ներսէսի (Լամբրոնեցոյ), որուն հրամանաւ գրուած է «Պատմութեան գիրքս» : Ներսէս քահանայացաւ 1168ին եւ Լպրիկոս պոստոսաւ 1175ին : Այս գրուածքի մասին ակնարկութուն մ'ունի Սամուէլ Սկեւոացի Ներսէսի Սաղմոսաց Մեկնութեան Յիշատակարանին մէջ (Տաշեան, Յուլյակ, էջ 332բ) :

⁵ Հ. Յ. Տաշեան, Յուլյակ հոյ. ձեռագրաց Միւթ. Մատենադարանին ի Վիեննա 1895, էջ 446 :

Երուսաղէմ, 1, 648բ (1419), 97, 134բ—138բ (1328⁶) :

Գրուածքիս Ա. Մասն ունինք ճիշդ այսպէս նաեւ Վենետիկի Միսիթարեանց Թ. 217, 282ա—285ա (ԺԴ. դար, Յուլյ. Բ. 268—69) եւ 223, 392ա—294բ (ԺԵ. Յուլյ. Բ. 376) : Թէ մէկին եւ թէ միւսին մէջ կը պակսի Բ. յաւելուած մասը : Պահուած է նաեւ Պանդալէոնի զրած (կամ թարգմանած) ընդարձակ բնագիրը, որ կը սկսի «Պատմութիւն յազգա Մատին սուրբ առաքելոյն Պետրոսի եւ բերման ի Հայք : — Յամա Նիկիփոսոյ տիեզերակալի կայսեր Յունաց...», որ կ'աւարտի յիշատակարանովս. «Որք ընթեանոյք, յիշեցէք գտառապեալ Պանդալէոնի, զի բազում աշխատութեամբ հանի զզա յարկեղաց սրբոյն Սոփիայ, եւ թարգմանեցի ի յունականէն ի հայ լեզու ձեռամբ օրհնելոյն Յունեփայ ի փառս Աստուծոյ» : Պարիս 117, 58ա—60ա (1307) : 178, 517ա—20ա (ԺԲ) : Վենետիկ 303, 10բ—20բ (1220. Յուլյ. Բ. 1130) : Հրատ. Հայապատում, Բ., էջ 295—299) :

Կը տեսնուի սակէ, թէ Համառօտ խմբագրութիւնը կատարուած է ի ձեռն Գէորդ Մեղր վարդապետի, Երուսաղէմի Թ. 97ի վկայութեամբ :

8. Կանոնք Գրագարկի վանաց :

Պատմիչն Կիլիկիոյ կը գրէ, թէ Գէորդ Մեղրիկ «եզ գահմանս կանոնի նոցա (Միանձանց Դրագարկի) գրաւորական հաստատութեամբ, որ կայ մինչեւ ցայսօր» (Սիսուան, էջ 231) : Չայս կ'ակնարկէ անշուշտ Մ. Ուրհայեցոյ տեղիքը, թէ Գէորդ «հաստատեաց անդ (ի Դրագարկ) կարգ եւ կրօնք գառաջին սրբոց հարցն» : Իսկ Կիրակոս յառաջ կը բերէ այդ կանոններէն հաստատածներ. «Անգաղար լինել ի պաշտօնն զցայր եւ զցերեկ. եւ հանապազ պահօք կատարել. եւ առանձինն ումեք ոչ ինչ լինել, բայց ի հասարակաց տանէն» : Առ այս կը հայտնաւ Միսիթար Այրիվանեցոյ ակնարկութիւնը, թէ «գրագարկին կարգն սահմանեաց» : Դժբախտաբար մինչեւ ցայժմ չեն յայտնուած այս կանոնները : Սամ. Անեցի «Կանոնագիր Դրագարկու» կ'անունէ Կիրակոս վարդապետը († 1127), թերեւ Գէորդին գործակցած ըլլալուն համար :

⁶ Հմմտ. Արտապազ Արքեպ. Միւրմէկան, Յուլյակ հայ. ձեռագրաց Երուսաղէմի, Ա. (Վենետիկ) 1948, էջ 41բ, 233 :

9. Կարգաւորութիւն ձաշոց գրոց : Հ. Ղ. Այլիշան կը գրէ, թէ Գէորդ Մեղրիկ «գործ մի կարեւոր յիշեցեալ մերում թողեալ զկարգաւորութիւն ձաշոց գրոց. յաւելմամբ տօնից եւ պատշաճ ընթերցուածոց, հրամանաւ եւ հաճութեամբ Գրիգորի վկայասիրի» (Սիսուան 231) : Թաւրիզի Թ. 48 ձաշոցի գրիչն 1421ին կը յայտնէ Յիշատակարանին մէջ, թէ «վասն տօնից կարգելոյ մի ոք յերկուսացի, զի կարգեալ է գաս սրբոց հարանցն եւ սուրբ վարդապետին Գեւորգեայ ի սուրբ ուխտն որ կոչի Դրագարկ» (Աճառեան, Յուլյակ, էջ 113բ. հմմտ. նաեւ Վիեննայի Թ. 32, 14ա, Յուլյ. 181) : Այս իմաստով ալ գրած է Տօնացոյցի մը գրիչը 1287ին Սրբոց տօներու յառաջարանական ցանկին մէջ, թէ «զայս կարգ ընկալեալ է Հայաստանեայց եկեղեցի՝ ընտրութեամբ սուրբ վարդապետացն նախադրական տանն սուրբ ուխտին Դրագարկու» (Սիսուան, էջ 231բ) : Չարմանալի է, որ Կիրակոս վարդապետ, որ լրացուցած է Գրիգորի վկայասէրի ձեռնարկած ձաշոց գիրքը, ամենեւին յիշատակութիւնը ըրած չէ իր ընկերակցին Գէորդ Վ. Մեղրիկի գործակցութեան մասին :

Հ. Գ. Չարբանեկան, Հայկական հին դպրութեան պատմութիւն, Վենետիկ 1897, էջ 10Բ. կը յիշէ. «Գէորդ վարդապետի Մեղրիկ կոչեցելոյ Չարբանեկանք եւ խոստովանութիւնք. շարագրեալ ի թուին Հայոց ՇՂԲ. (ի Լագարեան դպրոցի ի Մոսկուայ)» :

Լագարեան ձեռարանի ձեռագիրները աչքէ անցուցած եմ 1924ին : Հոն Գէորդ Մեղրիկի Աղօթքներէն տեսած եմ Թ. 149ի մէջ երեք հատ միայն (Թ. 1, 3, 4) : Չեմ հանդիպած Չարբանեկանաց եւ նմանեաց : Թուականը ՇՂԲ կու տայ փրկչական 1144 տարին, երբ Մեղրիկ արդէն 30 տարի յառաջ հանգուցեալ էր : «Ի թուին Հայոց ՇՂԲ» կը թելարդէ ենթագրել թէ խօսքը Թ. 149 ձեռագրի մասին է. այս տեղ կայ Թղ. 21ա—46բ «Սկիզբն խոստովանութեան եւ յայտնութեան զազանեաց... Գրիգորի Յետուանց Մարաշոյ» եւ Թղ. 46բ—71բ «Վայք ողբոց... սասցեալ առաջի Աստուծոյ Գրիգորի միայնաւոր ճգնաւորի Յետուացոյ... որ էր ի թուին ՇՂԲ» : Չարբանեկան սխալ տեղեկութեան մը գոհ գացած է :

ԳԵՈՐԳ ԳՐԻԶ Ի ԳՐԱԶԱՐԿ, 1113
Կիրակոս վարդապետ, որ Գրիգոր Վկայասէրի յանձնարարութեամբ թարգմանութիւններ ըրած է յունարէնէ, եւ եղած է կրօնք աշակերտակից Գէորդ Մեղրիկի, կը գրէր 1116ին Գործ Առաքելոցի Մեկնութեան Յիշատակարանին մէջ, թէ Գէորդ Մեղր «յորդորիչ եղև մեզ (ի թարգմանութիւն) ի սկզբանն եւ թելարդի կատարման սորա» : Գէորդ հաւանօրէն եղած էր նաեւ այդ թարգմանութիւններու օրինակող, թէեւ այս մասին յիշատակութիւն չէ ըրած Կիրակոս : 1113ին, ուստի Գէորդի մահունէ տարի մը յառաջ, կը յիշուի ի Դրագարկ Գէորդ գրիչ մը, որ օրինակած է Կիրակոսի համար Աւետարան մը : Այս Աւետարանը Գարեգին Վ. Յովսէփեան (այժմ Կաթողիկոս Կիլիկիոյ յԱնթիւրիաս⁷) գտած է Խաչիկ Վ. Դաղեանի ձեռագիրներու մէջ եւ տուած է Յիշատակարանէն 11 տող նմանահանութեամբ (Տախտակ ՂԲ. պատկեր 146) եւ մաս մ'ալ յառաջբերութեամբ (էջ 48), զանց ընելով ինչ ինչ տողեր սկիզբէն եւ վերջէն : Միտ չէ գրած Յովսէփեան, թէ Յիշատակարանն հրատարակուած է 1907ին Ֆ. Ն. Ֆինկէ եւ Լ. Գանջեցեանի իրրեւ մասն Տիւրինդենի Համարարանի հայերէն ձեռագիրներու Թ. 1 Աւետարանին : Այս Յիշատակարանը գտած է Էնֆիլաճեան ուսուցիչ Յակոբ Կարենեանցի գրական մնացորդներու մէջ, անոր իսկ արտագրութեամբ : Որովհետեւ այդ Թ. 1 Աւետարանը, որուն Յիշատակարանը կը պակսէր, նախնաբար գտնուած էր Կարենեանցի քով, համարած է Էնֆիլաճեան, թէ Յիշատակարանի այդ արտագրութիւնը կատարած է Կարենեանց ա'յս Աւետարանէն, երբ տակաւին չէր հեռացուած անկէ Յիշատակարան-թուղթը⁸ : Ուստի վերագրութիւն լոկ ենթադրութեամբ : Այժմ երբ այդ Յիշատակարանի սկզբնագիրը գտնուած է, աւերոյք է ամէն ենթադրութիւն : Յիշատակարանն է⁹ :

⁷ Քարտէզ հայ հնագրութեան, Վաղարշապատ 1913 :
⁸ F. N. Finck und L. Gjandschezian, Verzeichniss der armenischen Handschriften der Kgl. Universitätsbibliothek zu Tübingen, Tübingen 1907, S. 3—6 : Հմմտ. Հ. Ն. Ակիւնեան, Տիւրինդենի Համարարանին Ma XIII, 1 հայերէն Աւետարանին Յիշատակարանը (1113). Հանդ. Ամս. 1917/8, էջ 159 :
⁹ Շղագիր տողերու Ա. մասը տես Քարտէզ հայ հնագրութեան, էջ 48, Բ. մասը՝ անդ, Տախտակ ՂԲ., պատկ. 146. մնացածները Կարենեանցի արտագրութեան են : Յիշատակարանն աչքի առաջ ունեցած է

«Կամաւքն Աստուծոյ Հաւր կենդանոյ եւ կամողի յամենայնի եւ միածնի Որդւոյ իւրոյ կենարարի մերոյ եւ կենդանարար եւ երկըրպագելի Հոգւոյն սրբոյ:

Ես Կիրակոս ի վերջ հասեալ գիտնակաւնաց մեղաւոր եւ անարժան ծառայ Աստուծոյ, ցանկացող եղէ այսմ լուսախորհ եւ կենսակիր կտակիր եւ ետու աւարտել Գեորգայ գրքի ի ստայգ եւ յ(ը)նտիք գաղափարէ սըրբոյն Սահակայ քարգմանչի յստակ եւ ակամակիրոս որպէս եւ ի փրկչէն աւացան, զոր յոյժ բաղձանաւք եւ յոգնա(տոչոր) 10 տենչանաւք մեծաւ աշխատութեամբ ստացայ զսա ի լուսաւորութիւն մանկանց եկեղեցւոյ եւ յիշատակ ինձ եւ ծնողաց իմոց եւ ամենայն ընաւ զարմից՝ կենդանեաց եւ ննջեցելոց:

Գրեցաւ սուրբ Աւետարանս ի հրեշտակալոյն մեծաստանիս Դրագարկիս՝ առաջի սուրբ Աստուածածնիս եւ սուրբ Եղբայրութեան ի միջիս, ի ՇԿԲ քուականիս հայկական ազգիս, ի քագաւորութեանն Յուկաց Աղէքսի երկաբնակի. եւ ի կաթողիկոսութեան Հայոց Բասղի եւ յաջորդի նորուն Գրիգորի ի փառս Գրիստոսի:

Հ. Բ. Սարգիսեան, Բագմալէպ 1905, էջ 304ա կը հաւատայ, թէ Վենետիկի Մխիթ. Մատենադարանի մէջ կայ Գրիգոր Արշարունեաց Եպիսկոպոսի Ընթերցուածոց Մեկնութեան «կէս երկաթագիր եւ հնագոյն» օրինակ մը, որուն ստացողն եղած է Գէորգ Մեղրիկ, ինչպէս էջ 278 «ինքնագիր յիշատակարանը» ցոյց կու տայ: Անդրագոյն տեղեկութիւն այս ձեռագրի մասին կը պակաս ինձ:

ՆԿԱՐԱԳԻՐԸ

Գէորգ իր ժամանակակիցէն, Մատթէոս Ուրհայեցիէն կը պանծացուի իբրեւ «այր հրաշալի եւ սքանչելի ճգնաւոր», որ ճգնած է 50 տարի շարունակ չորաճաշակ եւ կիրակի օրերը ոտնաւոր տընութեամբ: Ան սկսած էր

Հ. Ղ. Ալիշան, Միտան, էջ 233ա. «Դարու միով եւս յառաջ (1113) դրեալ է աստ աւետարան մի ի Գէորգայ գրչէ՝ հրամանաւ մեծի վարդապետի Կիրակոսի կանոնադրի վանայն, որ նոյնպէս յիշէ զՍ. Աստուածածնին եկեղեցին Դրագարկի». հաւանօրէն Գ. Շիրմազանեանէ հաղորդուած... — Յօդուածս արդէն շարունակ էր, կըր հասաւ ինձ ի ձեռն Մեծ. Հ. Հ. Ոսկեանի վեհափառ Գարեգին Կաթողիկոսի Մատենան Յիշատակարանաց (Ա. Մաս, էջ 1—412), ուր զտայ Յիշատակարանս իր ամբողջական մասերով: 10 Տղ. գոգնա...

իր կրօնաւորական կեանքը Սեւանի մէջ, սպա աշակերտած էր Պարլաւու վանքը Գրիգոր Վկայասէրի առաջնորդութեան տակ, ունենալով իրեն աշակերտակից Կիրակոս վարդապետը. որ կը գրուատէր զինքը իբրեւ «երէց աւուրք եւ խոհականութեամբ, եղբայր մեր եւ անդրանիկ մերոյն կրթաւարժ եւ հրահանգայեց աշակերտութեան, խաչակիր եւ քրիստոսագրեաց»: Ան նկատուեցաւ յետոյ «գլխաւոր վարդապետ», քարոզիչ ապաշխարութեան, «օրինակ բագմաց» եւ «հայր խոստովանութեան ամենայն Հայաստանեայց»: Կը գրէ նա ինքն, թէ «որքան յայս անուն եւ յաստիճան կոչեցայ, հասարակ ամենեցուն, որպէս անձին իմոյ, ինդրեցի ի Տեառնէ», այսինքն աղօթեցի Աստուծոյ եւ ինդրեցի իրմէ շնորհք ինչպէս իմ անձին, նոյնպէս համաշխարհի համար: Իր գլխաւոր արդիւնքն եղաւ ցիր եւ ցան ճգնող միանձնաւորները հաւաքել վանական յարկերու տակ, կազմակերպել միաբանական հաստատութիւններ, եւ սահմանել անոնց համար կանոններ, հետեւողութեամբ առաջին սուրբ հարց հրահանգներուն, որով ծաղկեցան Դագարկի եւ Պորին անապատի վանական հաստատութիւնները:

Գէորգ «ըստ քաղցրութեան բարուց» եւ «քաղցրուայց վարդապետութեամբ» արժանացաւ ժամանակակիցներէն «Մեղր» յորջորջանքին: Իր քաղցրախօս լեզուն կը հնչէ դեռ այսօր իր Աղօթքներուն եւ իր Ողջունագրին մէջ, որ պարզ է եւ յստակ, նմանողութեամբ դասական հեղինակներու, որոնց արտագրութիւններու ջերմեռանդ ընթերցողն եղած է: Կարելի է մատնանշել տեղիքներ, բառեր, որոնք կը տեսնուին իր գրչին տակ եւ կ'ենթադրեն Յովհ. Ոսկերեանի Մեկնութիւնները, Վարք Հարանցը եւ այլն, թող Աստուածաշունչէն կրած ազդեցութիւնները:

Թէ բերա՞ծ է ինքը որ եւ է աջակցութիւն Կիրակոսի, Թէ ուրիշներու թարգմանութիւններու, սրբագրութեամբ լեզուի, չգիտենք: Բայց կրնանք վստահարար ըսել, թէ ան օգնած է նոր թարգմանուած գործերու արտագրութեան. յամենայն դէպս եղած է յորդորիչ եւ քաջալերիչ Կիրակոս թարգմանչին:

Գէորգ Վ. Մեղրիկ թողուցած է սակաւաթիւ գրաւոր աշխատանքներ: Անոնցմէ

հինգը աղօթքներ են, ինչպէս խորագիրները կը վկայեն. չորրորդն եւ հինգերորդը հաւանօրէն նախնարար մէկ ամբողջութիւն կը ներկայացնեն, չորրորդը աղօթքի ձեւով հայելի խոստովանութեան (Beichtspiegel) մըն է; ուր յառաջ կը բերուին մեղքերու տեսակները, որոնց համեմատ խոստովանողը պիտի քննէ իր խիղճը. հինգերորդը զղջման արտայայտութիւն է. այս իմաստով ճիշդագոյն է ձեռագրաց ոմանց սուած խորագիրը «Բանք խոստովանութեան յանցանաց»:

Աւելի ուշագրաւ է «Մատենան պաղատանաց» կամ Ողջունագիրն Մեղրիկի «զկնի ելից իւրոց յաշխարհէ». ուղղուած Բարսեղ եւ Գրիգոր կաթողիկոսներուն, իր աշակերտներուն, վանականներուն եւ ծանօթ եւ անծանօթ հաւատացեալներուն: Այս՝ ծաւալով ընդարձակագոյն գրութիւնն է Մեղրիկ վարդապետի եւ իր տեսակին մէջ միակը հայ գրականութեան մէջ, նման մը Ս. Եփրեմի կտակին: Մեղրիկ գրած է զայն հաւանօրէն իր մահէն տարի մը յառաջ, թերեւ 1113ին, երբ կենդանի էր Բարսեղ կաթողիկոս եւ ամբողջ ժառանգ անուանուած էր Գրիգոր Փոքր վկայասէր: Ան կը գրար իր մահը մերձ, եւ մտահոգուած էր յետ ելից յաշխարհէ անդրաշխարհի ճանապարհի մասին, աչքի առաջ բերելով Եփես. Զ. 12, անցքը «ընդ այսս չարութեան որ ի ներքոյ երկնից»: Կը յորէ նախ իր հաւատացեալները յարատեւելու այն աւետարանական վարդապետութեան եւ խրատներու մէջ, զորոնք քարոզած էր ինքը, սպա կը ինդրէ անոնց աղօթքը իրեն համար զօրաւիզն՝ յաղթելու համար այսերու զիմամարտութեանց եւ հասնելու անփորձանք խոստացուած աւետիքներու:

Այս Մատենան պաղատանաց կը հրատարակեմ ամբողջութեամբ միակ օրինակի, Նիկոսիայի Ս. Աստուածածին եկեղեցւոյ Մատենադարանին Թ. 40 ձեռագրի համաձայն, ուր կը գրուէ թղ. 175ա—181ա: Չնայելով տեղ տեղ ցեցակեր եղած է, այս պատճառաւ ալ բառեր, նաեւ սողեր անընթեանելի եղած են: Օրինակութիւնս կատարած եմ 1945 յուլիս 5ին ի Կիւրոս: Չեռագրիս մասին տես իմ ցուցակս նոյն Մատենադարանի ձեռագիրներու (տակաւին անտիպ):

Հ. Ն. ԱՊՐԻԼԻԱՆ

ՄԱՏԵԱՆ ԳԱՂԱՏԱՆԱՅ ՍՈՒՐԲ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ՄԵՂՐԿԱՅ ԶԿՆԻ ԵՒՅՑ ԻՒՐՈՑ ԶԱՇԽԱՐԷ

Կամաւք եւ ողորմութեամբ ամենասուրբ Երրորդութեանն Հաւր եւ Որդւոյ եւ ամենասուրբ Հոգւոյն:

Այս իմ գիր ողջունի եւ պաղատանաց է, մեղապարտ եւ տրուպ ծառայի Աստուծոյ Գեորգեայ. զոր գրեցաք առ համաւրէն սուրբ եղբայրութիւնդ, որոց տեսեալ զմեզ եւ կամ լուեալ զմէնջ: Բանդի ըստ կամաց ամենազաւր հրամանին եհաս ինձ կէտ վերջին եւ հոգս ճանապարհին որ առ Աստուած. ուստի ստակացեալ անձն իմ գողամ եւ տագնապիմ յոյժ: Մտացեալ զցաւս մարմնոյ յաղերս պաղատանաց եկի առ ձեզ. եւ հոգեպէս առաջի անկեալ որպէս Աստուծոյ, բուն հարեալ զտոյց ձերոց, ո՞վ աստուածասէր հարք եւ եղբարք, եւս եւ ոյք առաքելական աթոռոյ էք արժանացեալ: Ամենեքին, ոյք զԱստուած առաջի աշաց ունիք հանապաղ եւ սիրէք զնա, եւ պահէք զպատուիրանս նորա, զմեծն եւ զսքանչելին, թէ Յայսմ ծանիցեն ամենեքեան թէ իմ աշակերտք էք, եթէ սիրեցէք զմիմեանս, որպէս եւ ես զձեզ սիրեցի մահու չափ: Եւ որք զարհուրիք յաստուածային հրամանաց բանի աւետարանին Յոհաննու որ ասէ, թէ Որ գեղբայր իւր ոչ սիրէ արդեամբք, զԱստուած ոչ երբեք սիրեցէ: Եւ արդ զիտեմ զի դուք ամենեքեան յաւթաբարութիւն ունիք սիրել զԱստուած եւ գեղբարս, որ է գլուխ պատուիրանին, յորս եւ առաւել հաստատեցէ զձեզ Աստուած եւ աւրհնեցէ եւ փրկեցէ յամենայն վտանդից որ ըստ հոգւոյ եւ ըստ մարմնոյ. եւ ի ինամս ողորմութեան իւրոյ պահեցէ (միշտ) եւ նարատ վարուք մինչեւ ի դալուստն իւր յերկնից, եւ կացուցէ զուարթերես առաջի իւր ի մէջ ամենայն սրբոց, հրեշտակաց եւ մարդկան, լսելով զքաղցր եւ զանարատ զձայնն եթէ եկայք աւրհնեալք Հաւր իմոյ:

Եւ արդ ես բաղամեղս, որ ոչ ունիմ համարձակութիւն յաւուր յայնմիկ առաջի բարձրելոյն, այլ իբրեւ յԱստուած ապաւիրեմ:

4 որոյց: — 8 գէորգեա: — 15 հոգեպէս: — 21 զնայ... նորայ: — 22—25 Յովհ. ԺԳ. 34—35: — 27—28 Ա. Յովհ. Դ. 10: — 28 սիրեցէ: — 40 Մատթ. ԻԵ. 34:

նեալ կարաւորմ աղաւթից ձերոց եւ բարե-
 45 խօսութեանն եւ միջնորդութեան առ Տէր. եւ
 աղաչեմ զատուածսրբութիւնդ ձեր համաւ-
 րէն, որոց բնակեալ էք ի դատուցեալ սրբա-
 րանի, եւ հողէպէս մերձաւորութեամբ ի
 հոգակեալ եղբայրանոցսդ եւ ի փոքր անա-
 50 պատուք. եւ որք միայնութեամբ ի բարիօք
 կափուլն զովանայք, այս ինքն ի ծոց Հաւր
 եւ ամենայն յոգնախումբ հրեշտակերամ սրբ-
 բազգեստիցդ, որոց ի մասին խաղաղութիւն
 եւ աւրհնութիւն: Եւ աւրհնութիւն Աստուծոյ
 55 ժամանեցէ առ ձեզ, որք լուեալ զմէնջ կամ
 տեսեալ, նաեւ բազմաց ի ձէնջ կարեկից էաք
 ըստ Աստուծոյ եւ ոմանց խրատ եւ կիսոց
 վշտակից խնամով: Վասն որոց եւ վշտա-
 գնեալ եւ տարժանեալ եղբայրս ձեր (որ) ի
 60 կատարած կենացս իմոց հասի, աղաչեմ զա-
 մենեսեան եւ պաղատանաւք հայցեմք ի ձե-
 րում սրբութեանդ վասն ահագին եւ սոսկալի
 աւուրս, յորս եկն եհաս կոչաւոյն. եւ զնամ
 զանձան եւ զերկայն ուղեգնացութիւն եւ
 65 կալ առաջի մեծ եւ հաւաք դատաւորին, ան-
 կաշառ եւ անբարեխաւս ատենին որ ոչ գաւ-
 րեն վկայք եւ ոչ է ժամ արտասուաց կամ
 բանի պաղատանաց. յորում փակի ամենա-
 մեծ եւ կեցուցիչ դուռն ապաշխարութեան եւ
 70 գթութիւնն երկայնամիտ եւ ողորմած Կենա-
 րարին, զանոց փութանակի ի համառաւտ
 վճիռն, ըստ արժանեաց հատուցման, ըստ
 իւրաքանչիւր գործոց: Եւ արդ ոչ ունիմ սալ
 պատասխանի առաջի ճշմարիտ եւ արդար
 75 դատաւորին, (որ) գհաւաստի համարս պա-
 հանջ վասն բանից եւ գործոց եւ խորհրդ-
 րոց, յայրատ հայեցուածոց եւ գաղտնի իմա-
 նախացն ըստ աւետարանին. նաեւ աւուրց
 աւուրց, եւ ժամուց ժամուց, որչափ կեամք
 80 ի սնտոի եւ ընդունայն կենցաղուծս: Եւ ես
 զի՞նչ պատասխանի տայցեմ եւ կամ գործոց
 տացից համարս իմաստուն համարատուին
 զանաւրէն եւ զանարժան խորհրդոցս. կամ
 85 զո՞րչափ դատարկ եւ սնտոի եւ վայրապար
 բանից եւ զչարաց, զարանջոց, զբամբա-

սանաց, զչարախաւսութեան, զատութեան,
 զկեղծաւորութեան, զփաղաքանաց, զչոզ-
 մոգութեանց, զողտքանաց, ուր աստուածային
 աղն պիտոյ էր լինել եւ զանհամեմեացն յաւ-
 90 զել զանհամութիւնն. ուր պարտն էր ողբարոյ
 եւ յողբս փոխարկելոյ գտարջացեալսն, զգան-
 ձանաց եւ զանմիտ լրջմտութեանս: Ուր
 պարտն էր ոչ ամբառնալ ի հողոյ յաղազս
 բիւրուց սխալանացն եւ յիշել զտաղանդան,
 թէ Ում շատ տուաւ, առաւել եւս պահան- 95
 ջեացեն ի նմանէ. բայց ես թոյլ եւ մեղի,
 անձնակամ եւ հեշտասէր կեցի յաշխարհի,
 ուր պարտն էր զոյր եւ զգիշեր անսրտաղաղէս
 խոկալ զկա || ող || || || ն, զի յայնս հրաւրի-
 ցայ ի Տեառնէ. եւ ըստ սրբոյն Պաւղոսի ար- 100
 տասուաւք ինդրել եւ ուսուցանել զիւրաքան-
 չիւր: Այլ ես առաւել մարմնականաւքս զբա-
 ղեալ: Եւ արդ զինչ գաւրեմ ընդ գրով արկա-
 նել զանրաւութիւն սխալանաց իմոց. եւ թէ
 ապաշխարեցի եւ զղջացայ, ոչ գիտեմ թէ 105
 լուաւ Տէր կամ եթող զպարտ քանքարոյն,
 զոր վասնեցի ծուրութեամբս:
 Եւ արդ զի անչափ վերաւքս մեղաց պա-
 շարեալ է անձն իմ, որով սոսկամ եւ զար-
 հուրիմ: Արդ յաղաւթս ձեր ապաւինելով, 110
 աստուածասէր հողիք, հարք իմ եւ եղբարք,
 կարեկիցք եւ ազնականք ինձ եղբուրք, ձեռն
 տուեալ աղաւթիւք ի ժամուս յայսմիկ եւ առ
 յապա, ինձ եւ ամենայն հանդուցելոց, յա-
 դազս հրամանին Տեառն որք ի ձեզ եւ վասն 115
 ճշմարիտ սիրոյ եղբայրութեան ձեր, յորս
 հաստատ || || || || || || || ն, ի ճշմարիտ
 շնորհս: Զի իւրաքանչիւր ոք ի ձէնջ որ ոչ ի
 հարկէ կամ հարեւանցի ստութեամբ, այլ ի
 սուրբ սրտէ եւ ի մտաց բարեաց եւ գթովք 120
 հողւոյն աղաւթեցէ վասն իմ եւ վասն ամե-
 նայն վաղձանելոց ի Քրիստոս, հարեւրապա-
 տիկ առցէ յամենառատ եւ ի բարեգութ
 Տեառնէն, պահեստ իւրոյ երկայնածիղ ճանա-
 պարհին եւ պաշար: Իսկ եթէ սղորմութիւն 125
 գլուխ է ամենայն բարեաց, ապա քան զմարմ-
 նոյ ողորմելն՝ հողւոյն է վերազոյն. այնչափ
 որչափ ոգի առաւել է քան զմարմին: Եւ այս
 է զոր ասեմս ձեզ, կատարմամբ մեղսաքաւիչ
 խորհրդոյն աւթանդակեալ ինձ եւ ամենայն 130

44 բարեխօսութեանն: 51 Հմմտ. Յովհ. Ոսկերեանի Մեկն. Պաւղոսի, Ա. 122. «Չանապատն տեսանիցես, զմենութիւնն նշմա-
 րիցես... անկանիցես ի բարիւն կափուլն»: — 56 կա-
 րեկից: — 62 սրբութեանէս: — 64 ողորմութեան: —
 77 յարատ: — 78 նայեւ: — 79 ժամու. ժամուց: —
 81 պատասխանեցայց: — 83 զանաւրէն. ն արժանի:

87 զփաղաքանաց: — 95 Ղուկ. ԺԲ. 48: —
 98 Հմմտ. Յեսու, Ա. 8, Մղթ. Ա. 2: — 101 Գործք
 Առ. Ի. 31: — 114 յայցայ: — 120 Հմմտ. Ղուկ.
 ԺԲ. 23:

վաղձանելոցն յուսով: Ըստ իւրաքանչիւր
 կարի ամենեքեան ըստ ա || || || || || || || է
 սաղմոս ունիցիք, եթէ բանիւ եւ սրաիւ ող-
 ջախոճ մտաւք աղաւթս արասցէ զնացելոյն
 135 ի շինած հոգւոյս պիտոյից եւ պատարագի
 գործ գործէ: Նաեւ զայս ընկալարուք ահիւն
 Աստուծոյ, զի որքան յայս անուն եւ յաշտի-
 ճան կոչեցայ, հասարակ ամենեցուն որպէս
 անձին իմոյ ինդրեցի ի Տեառնէ: Ապա պար-
 140 տիք զուք եւ մեզ աղաւթել, զի յայս ճանա-
 պարհէ, որ առաջի կայ ամենայն հողւոյ,
 կործանեցէ ալ ամենակեցոյց հզարին զչար
 բանաբարկուն ամենայն իւրայաւքն, եւ ամենա-
 սուրբ Տէրն տերանց Աստուածն աստուածոց,
 145 հզարն Իսրայելի մերժեցէ եւ հերքեցէ
 զաստանայ եւ զամենայն արբանեակն նորա
 յանվախճան եւ յանսահման Աստուծութիւնն.
 եւ հրեշտակք Տէրունոյն նեղեալ հալածեցեն
 զնոսայ || || || || || || ոչ կարացեն նեղել զողի
 150 իմ կամ պահանջել զիւրեանց զչարութիւնն,
 այլ աղաւթիւք ձերովք եւ ողորմութեամբ
 հզարին անցեալ վերացայց քան զիւրեանց
 իշխանութիւնն եւ արժանի եղէց միշտ փա-
 155 սուրբ կամենասուրբ զԵրրորդութիւնն ա-
 սելով. Աւրհնեալ որ գառգ յերկնից, լոյսդ
 ճշմարիտ, յարեւելից փառաւք Հաւր գատել
 զերկիր: Երանի թէ եւ հայել ի սուրբ եւ յան-
 աւրինակ յանձառելի լոյս նորա եւ տեսանել
 արժանի լինիցիմ. եւ քաղցր տեսանել զո-
 160 զորմածն եւ հզարն, զհեզն, զհանդարտ
 երեսս նորա առ իս հայեցեալ: Արդ զոր ինձ
 եւ այլոցն առ Քրիստոս երթացելոցն առնի-
 ցէք, ամենառատ բարի թագաւորն Աստուած
 ընդարձակաւ (ամենակ)ալն, ամենապահն,
 165 ամենառատն, ամենապարգեւ հզար աջովն
 իւրով ըրեւրապատիկ ձեզ հատուցէ աստ եւ
 յանկէտ մշտնջենաւոր յաւիտենին, յանձառ
 եւ յանպատում կեանն ընդ ամենայն սուրբս
 իւր յանեղծ եւ յանուաղ մեծութեանէն եւ ար-
 170 ժանի արասցէ զձեզ զամենեսին զէմ յանդի-
 ման տեսանել զփառս նորա եւ հաղորդել լու-
 սոյ նորա ըստ աւետեաց բանին, թէ նման
 նմա լինելոց եմք: Որով եւ զուք, ով սիրելի
 եղբարք, զգուշացարուք կենաց ձերոց. մի
 175 սիրէք զսնտոի եւ զունայն զլի ցաւաւք կեանս
 զայս. եւ մի զկորուսիչ ողւոյն զհեշտութիւն
 մարմնոյ, եւ մի ազահութեան եւ իշխանսի-

րութեան զհետ երթայցէք. եւ մի ի ճշմարիտ
 խոստովանութենէն, ի պահոց եւ յաղաւթից
 թուլանայք եւ մի ոք (ոխակա)լութեամբ 180
 եւ հեռիւ գ(տա)նիցի, եւ մի ընդ անա-
 րէն չար հերձուածողաց հաղորդիցիք: Այլ
 զկէտ կոչման եւ զահագին աւր դատաս-
 տանին առաջի աչաց ունելով միշտ ի նոյն
 խոկաւջիք եւ հանապազ զնոյն հոգասջիք, 185
 յոր երթալոցն էք, ուստի ոչ եմք զերձանե-
 լոց: Քանզի ահագին է իոյճիւ ինչ անգանել ի
 ձեռս Աստուծոյ կենդանոյ: Արդ տէր Յիսուս
 հաստատեցէ զձեզ յամենայն բարիս եւ ի
 հաճոյսն իւր յաւիտեանս. ամէն: 190
 Ողջունեմ զձեզ զամենեսեան զթովքն
 Քրիստոսի Յիսուսի. եւ սիրով ձեր որ առ
 նա եւ միարանութեամբ առ միմեանս:
 Ողջունեմ եւ ձեաւք զամենայն ուղղա- 195
 փառ եկեղեցիս եւ զամենասուրբ Աստուծոյ
 սեղանս. ուր պատարագի կենարար, անա-
 պական եւ անմահական եւ աստուածացու-
 ցիչ մարմին եւ արիւն միածնի Որդոյն Աս-
 տուծոյ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.
 որում փառք եւ պատիւ յաւիտեանս յաւի- 200
 տենից. ամէն:

Հրատարակեց Չ. Ն. ԱԿԻՆԵԱՆ

136 նայեւ: — 148 տրուոյն: — 148/149 Սղթ.
 ԼԳ. 5: — 164 ընդ յարձակա...ալն:

172 Ա. Յովհ. Գ. 2: — 180/181 մի ոք...լու-
 թեան: — 187/188 երբ. Ժ. 31: — 188 կենդանայ: